Արմավիրի մարզի Նոր Կեսարիա գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի և երկրորդ կարգի մասնագետի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

1. **Արմավիրի մարզի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1):**

Առաջին կարգի մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպմանը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիներ և այլ կառուցվածքների շահագործման աշխատանքներին:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աղբահանության կազմակերպման աշխատանքներին: Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2. **Արմավիրի մարզի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1):**

Երկրորդ կարգի մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

Մասնակցում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը:

Իրականացանում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

-միջնակարգ կրթություն:

ՀՀ սահմանադրության ¦Համայնքային ծառայության մասին§, ¦Տեղական ինքնակառավարման մասին§ ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012թ. փետրվարի 27-ին ժամը 12.00 և 14.00-ին Նոր Կեսարիայի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմի կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս):

- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող

պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույքի պատճենները բնօրինակի հետ միասին:

-Հայտարարություններ (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս):

-Արական սեռի անձինք զինվորական գրքույքի կամ դրան փոխարինող վկայականի պատճենները իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք:

-Մեկ լուսանկար 3x4 չափի:

-Անձնագրի պատճենը ՀՀ քաղաքացիների մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթղթերը:

-Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-17.00 բացի շաբաթ և կիրակի օրերից:

-Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012 թվականի փետրվարի 8-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություն ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի գյուղապետարան և Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. /0237/ 2-07-70: